ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանուն Ամենայն Հայոց կաթողիկոսի, դիվանս լիազորված է հաստատելու և մեր եկեղեցու սպասավորների ու հավատացյալ ժողովրդի ուշադրությանը հանձնելու, թե Անթիլիասի Տանն Կիլիկիո դիվանի վերջերս հրապարակած անթվակիր շարադրանքը, ի մասին «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսի գործածության, փարիսեցիաբար խմբագրված մի փաստաթուղթ է, որ մի անգամ ևս քողազերծում է այդ Աթոռի այժմու պառակտիչ ոգին, ընդդեմ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի:

Պատմությունից հայտնի է, թե վերոհիշյալ շարադրանքի մեջ հիշատակված մի քանի ապօրինությունները մեր եկեղեցու կողմից մերժված և դատապարտված արարքներ են եղել, արարքներ, որով լոկ տեղական իրավասություններ ունեցող կիլիկյան գահակալներից ոմանք, մղված ստորակայության բարդույթներից, փորձել են երբեմն օգտագործել «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը, հակադրվելով Հայոց Ընդհանրական Հայրապետության, որ ի ս. Էջմիածին, երբեմն էլ ս. Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքություններին:

Շատ ուշագրավ և ինքնին պերճախոս է, որ Անթիլիասի շարադրանքի մեջ հիշատակված կիլիկյան վեց գահակալների օգտագործած տիտղոսներից ոչ մեկը մյուսին չի նմանվում, տիտղոսներ, որոնք չեն օգտագործվել կիլիկյան մյուս կաթողիկոսների կողմից:

Հարց կարելի է տալ, թե Անթիլիասի ներկա գահակալը ինչո՞ւ է հետևում մի քանի օրինազանց կիլիկյան կաթողիկոսների օրինակին և չի հետևում՝ նույն Աթոռի օրինապահ կաթողիկոսների օրինակին, որոնք ճնշող մեծամասնություն են կազմում:

Անցյալում կատարված մի քանի անկարգություններ երբեք չեն կարող արդարացնել նոր անկարգություններ:

Անթիլիասական շարադրանքի մեջ սպրդած է, սակայն, մի ճշմարիտ դատողություն, այն է՝ «...յուրաքանչյուրը իր պատմական տեղը և իր ծառայության կալվածը և դերը ունի»: Այո՛, այդպես էլ պե՛տք է լինի: Որով, Մայր Աթոռս հրավիրում է կիլիկյան Աթոռը, որ հարգի այս սկզբունքը, թե՛ կաթողիկոսական տիտղոսի օգտագործման և թե՛ իրավասությանց սահմանների տեսակետից, ի սեր վերականգնման մեր Մայր եկեղեցու միության և ներքին խաղաղության:

Այլապես նրա խոսքը, առանց գործի, մնում է կեղծ ու մեռյալ:

Անթիլիասի հրապարակած նոր այս շարադրանքը գալիս է մի անգամ ևս ապացուցելու, թե ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության հանդեպ նա անշեղ կերպով մնում է հակաթոռի դիրքերի վրա:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

30-ը նոյեմբերի 1973 թ.,
Ս. Էջմիածին